2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

ՀՀ 2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 216.9 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 205.6 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 65.8 եւ 54.8 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 29.6%-ով, ծախսերի գծով՝ 27%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 26%-ով կամ շուրջ 44.8 մլրդ դրամով[2]: Ընդ որում, 44.7 մլրդ դրամով ավելացել են հարկերը եւ տուրքերը, 3.1 մլրդ դրամով՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, իսկ պաշտոնական դրամաշնորհները եւ այլ եկամուտները (նախկինում՝ ոչ հարկային եկամուտներ) նվազել են համապատասխանաբար 196.0 մլն դրամով և 2.8 մլրդ դրամով: Արդյունքում եկամուտների կազմում 4.4 տոկոսային կետով աճել է հարկերի եւ տուրքերի տեսակարար կշիռը, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների եւ այլ եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 1.8 եւ 2.5 տոկոսային կետով: Պետական բյուջեի եկամուտների 79.8%-ը ձեւավորվել է հարկային մուտքերի հաշվին, պետական տուրքը կազմել է բյուջեի եկամուտների 3%-ը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 13.6%-ը, այլ եկամուտները՝ 3.6%-ը: «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաեւ պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 4.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 3.2 մլրդ դրամի դիմաց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 173.1 մլրդ դրամ եւ 67.2%-ով ապահովել կիսամյակային ծրագիրը եւ 30%-ով՝ տարեկան ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն աճել են 34%-ով կամ 43.9 մլրդ դրամով[3]: Ընդ որում, գրեթե բոլոր

---

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում եւ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

[2] 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաեւ պետական բյուջեում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի նախորդ տարվա հետ համեմատություններում հաշվի են առնվել նշված փոփոխությունները:

[3] 2008 թվականի հարկային եկամուտներում ներառվել են հանքարդյունահանման լիցենզառուների եւ հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվող ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, որոնք նախկինում հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ, հետեւաբար 2007 եւ 2008 թվականների

հարկատեսակների գծով արձանագրվել են աճի բարձր տեմպեր, բացառությամբ պարզեցված հարկի:

Ավելացված արժեքի հարկը կազմել է շուրջ 87.2 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 50.4%-ը: Նշված գումարից 54.1 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 33.1 մլրդ դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 49.1%-ով կամ 28.7 մլրդ դրամով: Ընդ որում, ավելացել են եւ՛ ներմուծումից, եւ՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

Հաշվետու ժամանակահատվածում ակցիզային հարկի մուտքերը կազմել են ավելի քան 12.9 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 7.5%-ը: Մասնավորապես, հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 9.2 մլրդ դրամ, որից 4.3 մլրդ դրամը՝ բենզինի եւ դիզելային վառելիքի, 3.7 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 3.7 մլրդ դրամ, որից 1.8 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 14.7%-ով կամ շուրջ 1.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է տեղական արտադրության ծխախոտի իրացման եւ ծխախոտի ու բենզինի ներմուծման գծով մուտքերի աճով: Ակցիզային հարկի աճ է արձանագրվել նաեւ ալկոհոլային խմիչքների ներմուծման գծով:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների 18.4%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 31.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 20.3%-ով կամ 5.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական, ինչպես նաեւ ֆինանսավարկային կազմակերպությունների վճարումների եւ նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարված շահութահարկի աճով:

2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է ավելի քան 14.7 մլրդ դրամ՝ կազմելով հարկային եկամուտների 8.5%-ը: Այն 26.7%-ով կամ 3.1 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները:

ցուցանիշների համադրելիության նպատակով 2007 թվականի ցուցանիշներում նույնպես կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Հաշվետու ժամանակահատվածում զգալի աճ է արձանագրվել նաեւ մաքսատուրքի գծով: Այն կազմել է ավելի քան 9.1 մլրդ դրամ՝ 48.5%-ով կամ շուրջ 3 մլրդ դրամով գերազանցելով 2007 թվականի հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշը եւ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 5.3%-ը:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են ավելի քան 5.5 մլրդ դրամ՝ 6.9%-ով կամ 357.1 մլն դրամով գերազանցելով 2007 թվականի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը: Այն հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների գազալցման, առեւտրային գործունեությունից, առեւտրի իրականացման վայր կազմակերպելու եւ հանրային սննդի ոլորտներից ստացված մուտքերի աճով: Միաժամանակ նվազել են վիճակախաղերի կազմակերպման, տրանսպորտային գործունեության ոլորտներից, ինչպես նաեւ բենզինի եւ դիզելային վառելիքի մանրածախ վաճառքից գանձված գումարները:

2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 2.3 մլրդ դրամ պարզեցված հարկ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 22.2%-ով կամ 655 մլն դրամով՝ պայմանավորված «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում տարեսկզբից ուժի մեջ մտած փոփոխություններով:

Բնօգտագործման եւ բնապահպանական վճարներից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 2.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն ավելացել են 28.2%-ով կամ 610.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման վճարների, ինչպես նաեւ ավտոմեքենաներից արտանետվող վնասակար նյութերի համար գանձված վճարների ավելացմամբ:

2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 6.7 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես, 4.7 մլրդ դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, 744.4 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 665.4 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 408.9 մլն դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները եւ 163.7 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման եւ սոցիալական զարգացման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերն ավելացել են 36.3%-ով կամ շուրջ 1.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներով, միաժամանակ նվազել են հանրային ծառայությունների կարգավորման

պարտադիր վճարները, եւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական տուրքի գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 6.5 մլրդ դրամ՝ 62.1%-ով ապահովելով կիսամյակային ծրագիրը եւ 29.1%-ով՝ տարեկան ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքն աճել է 13.2%-ով կամ 754.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների լիցենզավորման, դատարան տրվող հայցադիմումների ու գանգատների, ինչպես նաեւ օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքերի աճով:

2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում պարտադիր սոցիալական ապահովության վճարներից բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 29.6 մլրդ դրամ եւ 60.1%-ով ապահովել կիսամյակային ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 11.6%-ով կամ շուրջ 3.1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա 216.6 մլն դրամի դիմաց ստացվել են 20.6 մլն դրամի պաշտոնական դրամաշնորհներ, որոնք մուտքագրվել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2008 թվականի հունվար-ապրիլ ամիսներին կազմել են շուրջ 7.8 մլրդ դրամ եւ ապահովել առաջին կիսամյակում նախատեսվածի 78.9%-ը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 26.2 %-ով կամ 2.8 մլրդ դրամով: Վերջինս պայմանավորված է «Արմենտել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ 2007 թվականին վճարված գումարով, որը կազմել էր 4.6 մլրդ դրամ: Առանց նշված գումարի 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 31.6%-ով կամ 1.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական մարմինների արտաբյուջետային եկամուտների, իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի, ինչպես նաեւ բանկերում եւ այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից եւ դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների աճով:

2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 205.6 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով առաջին կիսամյակում նախատեսվածի 54.8%-ը: Մասնավորապես, 193 մլրդ դրամ կազմել են ընթացիկ ծախսերը, 12.5 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները:

Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 27.8%-ով կամ 44.8 մլրդ դրամով:

Հունվար-ապրիլ ամիսներին կատարվել է ընթացիկ ծախսերի կիսամյակային ծրագրի 60.6%-ը՝ կազմելով 193 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերից 16.6 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 61.4%-ը: Պարտադիր սոցիալական ապահովության վճարներին տրամադրվել է 1.3 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում նախատեսվածի 57.6%-ը: Ծառայությունների եւ ապրանքների ձեռքբերմանը պետական բյուջեից հատկացվել է 35.8 մլրդ դրամ, որը կազմել է առաջին կիսամյակի ծրագրի 55.1%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 3.6 մլրդ դրամ է հատկացվել պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 60.6%-ը: Մասնավորապես, 2.6 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 1 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 40.0%-ով՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել են ավելի քան 5.9 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 54.9%-ը: 2008 թվականի հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 13.5%-ը կամ 26 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որից 14.7 մլրդ դրամը (առաջին կիսամյակում նախատեսվածի 75.8%-ը) տրամադրվել է այլ ընթացիկ դրամաշնորհների, 7 մլրդ դրամը (առաջին կիսամյակում նախատեսվածի 66.7%-ը)՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 34.9%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին եւ կենսաթոշակներին, որոնք կազմել են 67.4 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում նախատեսվածի 63.2%-ը: Մասնավորապես, 51.4 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 16 մլրդ դրամ՝ նպաստներին:

2008 թվականի առաջին չորս ամիսներին ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են ավելի քան 12.5 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի ծրագրի 22.2%-ը: Մասնավորապես, շուրջ 18.3 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը եւ 5.7 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: 2007 թվականի հունվար-ապրիլ ամիսների համեմատ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն աճել են 23.6%-ով:

2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է 11.3 մլրդ դրամ հավելուրդով՝ նախատեսված 45.4 մլրդ դրամ

պակասուրդի դիմաց: Ընդ որում, ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -8.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա -12.2 մլրդ դրամի դիմաց, իսկ արտաքին աղբյուրները՝ -3.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 912.7 մլն դրամի դիմաց: Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 10.9 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը: 25.9 մլն դրամ տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: 187.5 մլն դրամ մուտքագրվել է նախկինում տրամադրված վարկերի վերադարձից: Հաշվետու ժամանակահատվածում 19.1 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները:

Հունվար-ապրիլ ամիսների ընթացքում պակասուրդի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային բանկի կողմից տրամադրվել է 6.4 մլրդ դրամ՝ Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ ծրագրի շրջանակներում:

Արտաքին պարտավորությունների մարմանը հաշվետու ժամանակահատվածում ուղղվել է ավելի քան 2 մլրդ դրամ, որից 1.7 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 374.2 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկի մարմանը, 47.5 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը:

2008 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից 7.6 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին, որը 25.3%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

ՀՀ ֆինանսների նախարարության

լրատվական ծառայություն